

## ՀԵԴԵԼԸ ԵՒ ՆՈՐԸ ԺԱՄՄԱԿԸ 1)

ԲԵՇՈՂԻՆԻ համալսարանի մէջ կարդացած Հայոց ղա-  
սերը. Թարգմ. Սօլեանիկովի - Ս.Պ.Բ. 1861.

### ԳԱՂՈՒԱՆՔ ԵՒ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՔ

Այսեն փիլիսոփալութիւն ուրիշ բան չէ, եթէ ոչ նորա-  
ժամանակը, փոխադրուած դէպի մրտք (переведенное въ мыс-  
ш) և լիմարութիւն է կարծել, թէ որևէ փիլիսոփալութիւն  
անցնում է իր ժամանակակից աշխարհից դէպի գուրսա Հեղել.  
իրաւանց փիլիսոփալութեան լառաջաբանութեան մէջ,

Այս դրութիւնից պարզ երնում է, որ փիլիսոփալութիւնը  
իջնելով իր տեսական աթոռից ստք է կոխում իրական  
պատուանդանի վրայ. Յալտնի է թէ ինքը ժամանակը ուրիշ  
բան չէ եթէ ոչ հասկաց ողութեան և կարծիքի գու-  
մար, որևէ իցէ առնուած հասարակութեան, առնուած միջո-  
ցում. Բնկլիմ մետօղը և աշխատութիւնը—համակցել մասնաւոր  
երևութքը և մի ամբողջութիւն տալով նոցա, լաջորդ երեսլթ-  
քը ընդունել որպէս կրատորական արդիւնք—շատ մօտ է ըստ  
սեռին Հեղելի ալս դրութեան. Եւ իրաւ որ, չէ կարելի կար-  
գաւորապէս ուսանել պատմութեան ոգին, մինչև նորա մաս-  
նաւոր երեսլթքը չհաւաքվին դէպի մի որոշեալ աղքիւր, որ-  
տեղից դուրս էին եկել Յալտնի է թէ ալս դրութիւնը իսպառ-  
սասանեցնում է կամքի դրական ազատութիւնը, որով-  
հետև ենթարկում է շրջապատող աշխարհի և ժամանակի ազ-  
դեցութեան և զուգակազմում է:

Դրանովսկին, թէև խոստովանում է ալս դրութիւնը բայց

1) Համակրելի հրապարակախօս հանդ. Մ. Նալբանդեան-  
ցի ալս անտիպ հատուածը մենք՝ ստացել ենք հրատարակելու  
մեր լարգելի աշխատակից պ. Եր. Շահաղիզից. Խմբ.

ոչ դրականապէս։ Նա ասում է, թէ որովհետե պատմութեան, թէն անժխտելի, օրէնքի կատարումը չափված չէ ժամանակով, ուստի զլիսաւոր ներգործող անձին որակութիւնքը կարող են ազդել արդ կատարման ժամանակի վրայ. և ցաւում է, որ Մէկենասաշից ջոկ ուրիշ հեղինակները շատ քիչ ուշադրութիւն են դաշնուու պատմութեան հոգեբանական տարրի վրալ. Այսաեղ դարձեալ ասում է թէ ներգործող անձը հանդէս չէ գալիս որպէս լոկ գործիք, առ ինքնակալապէս կամ որպէս պաշտպան կամ որպէս հակառակորդ պատմութեան օրէնքի և ալին Սобран. սու. Գրանովսկаго Т 2. եր. 319—320. Ան հատուածի մէջ որ գրել էր Օդէնի զրքի վրալ Histoire de Henri VIII et du Schisme d'Angleterre, ու Տ. Աստիճանի Վոլ. 1847. 9 Vols.

Հեղելը անդրդուելի հետևելով իր զրութեան մի ուրիշ տեղ (փիլիսոփակութեան պատմութեան լառաջաբանի մէջ երես 9) ասում է թէ պատմութեան փորձերը անպատող են անց կենսում, խրատական հետք չթողնելով մարդկալին լիշտութեան մէջո. ինձ թուում է թէ արս անպատղութիւնը ընական է, որովհետե ապագալ մարդը ենթարկվելով իր ժամանակի աղղեցութեան կրաւորականապէս պիտի ներգործէ ժամանակի ոգուն համեմատ, արտեղ անցածի խրատը հազիւ թէ կարող է արժէք ունենալ. Գրանովս. խոստովանում է արս բալց թոյլ տալով պատմական խորհրդի աղղեցութիւնը, որ անել էր անցածի, մնացած աւանդութեանց հիման վրալ. Տես Գրան. ճառը կարդացած Մոսկվաի համալսարանում 1852. Յունվար 12., տարեղիսի. հանդիսի պատճառով. Գրա. Տ. I. երես 27.

(Օրէնքը, պատմաբանաբար հասկանալը, ասում է Հեղելը իր աշխատութիւններից մէկի մէջ, որ (ալսինքն հասկանալը) աշխատում է ցոլց տալ նորա (ալսինքն օրէնքի) հիմքը մոռացված սովորութեանց և արդէն մարած կեանքի մէջ, դորանով իսկ պարզապէս վկալում է, որ աղղակալի օրէնքը կենդանի ներկաւ ժամանակի մէջ ոչ խորհուրդ ունի և ոչ արժէքուն Այս զրութիւնը աւելի պարզ կերպով հասկացնում է և արդարացնում է իր (ալս երեսի սկզբում) փիլիսոփալութեան մասին զրութիւնը. ի՞նչպէս հրճուանք է գալիս մարդու վրայ, որ կէս դար առաջ միմիալն հոչակաւոր փիլիսոփալին հասկանալը և ըստունելի դրութիւնը ալսօր կարօտութիւն չունի

տպացուց անելու նաև շատ միջակ հասկացողութեամբ մարդոց!

Բայց դու տես, որ Հեղելի դրութիւնը ներգործում է և իր փիլիսոփակութեան վրան, որի ժամանակը անցած լինելով կարող է նաևին որպէս անցած կեանքի առաջացուցած արդիւնք, որպէս լիշտակարան գերմանական ոգու կերպարանագործութեան մէջ, և ոչ աւելի, Փիլիսոփական համակարգութեանց ժամանակները անցան այժմ կրիտիկի ժամանակ է. համակարգութեանց կործանումը արդէն մի մեծ և հոգակապ համակարգութիւն է թէե կործանվածների պէս զլուխներ, պրակներ ու կատեղորիներ չունի. Բարւոքել մարդկալին կեանքը անա փիլիսոփալութիւնը. ինչ ճամփով կուզես զնա, միան թէ խորհուրդը և նպատակը այն լինի. Յայտնի է թէ աւելի կարճ, աւելի բնական և աւելի լաջող ճամփան ընտրելի է քան թէ այն բարակ և միդապատ ճամփակարգութիւնքը.

Համը Գ դասի մէջ ասում է. «Հրէական (Մովսիսական) օրէնսդրութեան ոգու մէջ, Հեղելի կարծիքով, ցոլանում է Քաննթի փիլիսոփալութեան զերացական մօրալիզմը». սէրը և կեանքը, ա՞ս այն հասկացողութիւնքը, որ օգնում են Հեղելին ներս մտնել քրիստոնէական կրօնի և նորա արարողութեանց խորունկ խորհրդի մէջ: Հրէական ոգու մէջ—սորանով մտածում է նա (Հեղելը) հասկանալ վերը լիշտած հակադրութիւնը, ալս պատճառով աշխատում է համեմատութիւն դնել քրիստոնէութեան գլխաւոր հիմքերի և սիրու և կեանքի հասկացողութեան մէջ—հրէական հասկացողութեամբ ներողութեան և անցանքի մէջ անանցնելի վիճ կար. բայց օրէնքով տրված պատիմը համարում էր և մաքուր արդարադատութիւն. լանցանքի և պատիմի շաղկապը է լոկ հաւասարութիւնը և ոչ կեանքը»: Աչքի տակ առնելով միմիալն ալս հաւասարութիւնը անհնարին է խօսք ևս մէջ բերել հաշտութեան և ապրեցնելու մասին: Բոլորովին ուրիշ բան է, երբ սէրը կըլինի կրօնի կենդրունը, բարուականութեան գլխաւոր նշանաբանը: Միմիալն նոյն խակ մարդուց նորա ամբողջ գոլութիւնից է բղնում և անցանքը, և օրէնքը և ճակատագրի իրաւունքը,

Ալպէս էին այն ժամանակ—ասում է Համը—Հեղելի

հասկացողութիւնքը սիրու իսկութեան մասին, մարդու բոլոր բարուական ձգողութիւնքը կառավարող գործիքի մասին.

Յալտնի է թէ քրիստոնէութեան էական տարրը սէրն է. յալտնի է թէ Մեծ Հիմնադիրը իր վարդապետութեամբ վիր ի վայր կործանեց ակն ընդ ական և ատամն ընդ ատաման։ Վարդապետութիւնը, յալտնի է թէ քրիստոնէութեան նպատակն է ընկերական կեանքի բարւոքումը մինչզեռ մովսիսական կրօնից եսական ողին բղխում է ամեն մի քալափոխում,

Ուրեմն, քրիստոնէութիւնը հիմնված լինելով սիրու վըրալ, ուրեմն և ներող և զիջանող տարրի վրա, որ լինելով միենոյն ժամանակ արդ վարդապետութեան տիրապետող ողին, ընկերութիւնը բարւոքում ասած տեղը անարդարութիւն է տնկում և միտում է կշռի թաթը դէպի անհաւասարութիւն, ուրեմն քրիստոնէական կրօնը թշնամի է հաւասարութեան Քոլոր ալն ուրբեմն ները դուրս են զալիս դարձեալ ալն մովսիսական եսական ոգու ազդելուց որպէս թէ ալն ժամանակ է երեւում ճիշտ հաւասարութիւնը, եթէ Մարկոսը Կիրակոսի որդին սպանէ Կիրակոսը և տեսան քաշելով Մարկոսին մահի մատնէ։ Եթէ արիւն ընդ արեան, ակն ընդ ական սկզբունքը չլինի հաւասարութեան, միթէ վրէժիշընդրութիւնն է հաւասարութեան միակ ազիկը, սէրը չունի հաւասարութիւն, նթէ Մարկոսն էլ իր կարգով ելնէ Կիրակոսի որդին սպանէ և Կիրակոսի ալրին ատենի ձեռքով Մարկոսին մահի մատնէ։ Ինչ եղաւ ալս ոքանչելի հաւասարութեան էական և շօշափելի արդիւնքը։ Աանցանքը, երկու մարդ սպանեց, Մարկոսի և Կիրակոսի որդիքը, հաւասարութեան ոդին արդարադատութեան ձեռքով երկու մարդ էլ ջոկ սպանեց, ալսինքն Մարկոսին և Կիրակոսին։ մէջ տեղում մնացին երկու ալրի կնիկներ լւրեանց մնացած որբերով։ Կիրակոսի մահը կենդանութիւն չըերեց Մարկոսի սպանված որդուն, նոյնարէս Մարկոսի մահը Կիրակոսի սպանված որդուն։ Եթէ մարդու ձեռքում հնար զկալ ուռածը ապրեցնել. արդարութեան և հաւասարութեան անունով երկու նոր մարդ էլ սպանել ինչ խորհուրդ ունի ընկերական կեանքի մէջ. չը որ երկուքի տունն էլ կործանվեցաւ։ Ասենք թէ լանցանքը զործվել էր բայց տակաւին երկու տունն էլ հնար ունէին կենալու. բայց հաւասարութեան ողին ունքը շինեմ ասելով աչքն էլ հանեց

—երկու առևնից էլ մի մի մարդ առաւ սպանեց և մի նոր թէն սրբացուցած լանցանք էլ ու գործեց, ինչ է այս հաւա. սարութեան խորհուրդը:

Քրիստոնէութիւնը կործանեց և վշրեց այս վարդապետութիւնը սէրը դնելով ընկերական կենաքի հիմքը և բարուականութեան նշանաբանը, Մարկոսը թող ներէ կիրակոսին եթէ նա սպանել է նորա որդին, որպէս զի կիրակոսն էլ նորան ներէ, եթէ նա սպանէ սորա որդին, Բալց կարդ . . . . Կը մնալ մի ընկերութեան մէջ, եթէ լանցանքը մնալ անսպատիժ. եթէ բաց աշքով ներողութեան որդի սպանութիւնը, Զարմանք. Յանցանքի ընդդէմ պատիժ դնելով միթէ կարելի է լանցանք սանձել:

Սպանութեան աղբիւրն ինչ է—ատելութիւն կամ լափը տակութիւն. ես ին ոգի, որ ամեն ուրիշ զոհում է իր գոլութեան: Մովսէսը թողնում է որ մարդը ախտանալ այս ողով. լրանալ լափշտակութիւն, ատելութիւն և սպանութիւն—բալց երբ կատարված էր վերջին գործողութիւնը մահի է տալիս դործակատարին: Յալտնի է թէ մարդը պիտի չառէ, լափշտակութիւն շղանալ, եսին ոգին սանձէ միմիալն ՝ արտաքին աշխարհից—հասնելու պատիժից վախնալով. ուրեմն ընկերութեան սպանութիւնը էականապէս հիմնված է երկիւղի վրալ ամեն մի անգամ իրար վրալ իրաւոնք ունի նաև ուրիշ որպէս սպանողի, ատեցողի, լափշտակողի վրալ և իրար երեսից պիտի պաշտպանվին միմիալն երկիւղի միջնորդութեամբ: Երկիւղն է որ լուս է տալիս մարդուն ապրել ուրիշ մարդու հետ. ենթադրելով, որ ալդ ուրիշը պատիժից վախելով չպիտի գանցանք գործէ, Յալտնի է թէ այս վարդապետութիւնն եթ հատուցումի երկիւղը չինի ուրիշ բան չկալ նորան բռնող Հիմի տեսնենք, թէ երկիւղը բաւական է, կարող է սանչ դնել մարդու կրքերին. մեղմել նորա եսականութիւնը, Մարդը լզացել է լանցանքը. նա թէն գիտէ որ հատուցում կալ բալց նորնպէս զգուշութիւնք է առնում, որ ալդ հատուցումը իրեն չհասնի. ալո շատ անգամ զուր են գնում նորա հոգա. բարձութիւնքը և մատնվում է բալց շատ անգամ էլ վախչում է հատուցման երեսից. Բացի սորանից թշնամութեամբ զբարտ ված, սուտ վկաներով ալդ զբարտութիւնը հաստատված, արդեօք անմեղն էլ մահու պատիժ չէ կրում. և այս հաւասար.

րութեան ողուց բզիսած ըստ երեսութիւն արդարութիւնը հրապուրված և օրինական սպանութիւն չէ.

Քրիստոնէութիւնը սէր է քարոզում, ալ՛, ըստ երեսութիւն աւտասարութեան ողին բռնաբարգում է երբ լանցանքը ներգում է. բայց եթէ ալդ ներողութիւնը ընդհանուրի համար է, եթէ սէրը ամոքելով եռականութիւնը արդէն մարզու անձին մէջ սանձում է և բարեխսառնում է նորա կիրքերը, որ նա չէ կարող ալլ ևս ատել, լափշտակութիւն լղանալ, և ալդ խորհրդով . . . . երբ արդարադատութիւն առիթ չընի ալլ ևս զրպարտողների և սուստ վկաների թռկարդի մէջ բռնվելով օրինական սպանութիւնք գործել միթէ ալս աւելի հաւատարիմ գրաւական չէ ընկերութեան բարեկեցութեան նթէ սիրով ոգնորված ընկերութեան իւրաքանչիւր անդամը չէ նալում ալլ ևս իր ընկերի վրայ որպէս թշնամու կամ կատաղի գաղանի վրայ, եթէ փոխանակ երկիւղի որ ամենի սրտի մէջ ամրացած դադար չէր տալիս նոցա, տիրապետէ խաղաղութիւնը հիմնվելով փոխադարձ հաւատի վրայ, որի գրաւականը և աղբիւրն էր սէրը, միթէ ընկերութիւնը աւելի երջանիկ չի լինիլ, վրէժինդրութեան սկզբունքը ներողութեան սկզբունքին զանելով կամ հաւասարութիւնը (պատճի և մահի մէջ) սիրու զոնելով:

Միթէ ներողութեան մէջ հաւասարութիւնը հաւասարութիւն չէ. միթէ վրէժինդրութեան հաւասարութիւնը աւելի հզօր ներգործող է ընկերութիւնը ապահովելու համար.

Սստական ոգուվ գարակված ընկերութեան մէջ նոյն ոգին լանցանք է գործում, նոյն ողին դարձեալ պատճում է լանցանքը. Սարա արդիւնքը որչափ որ ըստ երեսութիւն արդարութիւն և հաւասարութիւն է, արնուամենալիւ էսկանապէս զւրս կանապէ ընկերութեան վնասակար:

Սիրով ոգնորված ընկերութիւնը, սիրուց ստեղծվելով հնար չունի լանցանք լղանալ լանցանք գործել, և նոյն սէրը դարձեալ ընդհանրական փոխազդեցութեամբ եղած լանցանքն էլ ներում է որով զարմանալի կերպով փոքրացնում է լանցանքների թիւը և կեանք է տարածում:

Ինչ է ալս քննութեանց արդիւնքը.

Մովսիսի կրօնքից աղբերանում է մահ իսկ քրիստոնէութիւնից կեանք.

Առաջինից փոխադարձ վրէժինողութիւն, իսկ երկրորդից փոխադարձ ներողութիւն. առաջինից ժառանգական և լաւիտենական թշնամութիւն, իսկ երկրորդից մշտնջենական սէր և հաշտութիւն. առաջինից եստկանութիւն և վալքենութիւն, իսկ երկրորդից անձնազոհութիւն և քաղաքակրթութիւն.

Նթէ թերեւս հաւասարութեան անունով պիտի պաշտպա. նեն սակն ընդ ական» վարդապետութիւնը, մենք թքում ենք ալն հաւասարութեան վրալ, որ երեսում է միալն թշուառութեան և մահի մէջ և յօժար ենք անհաւասար լինել չարագործութեան մէջ երջանկութեամբ էականապէս և դրականապէս հաւասար լինելով. Այս մտածմունքը ազդեցին ինձ վերը զրված փիլիսոփակութեան վրալ ժամանութիւնքը. Օգոստ. 12 1863.

Որ և իցէ փրլիսոփակի փիլիսոփալական համակարգութիւնը՝ ողղակի աղբերանում է ալն ազգի կեանքից և պատմութիւնից, ինչ ազգի ինքը պատկանում է. և լսպիսի դիպուածում փիլիսոփան կանգնած է իր օտիկական հողի վրալ Ապա եթէ նորա համակարգութիւնը բացի իր ազգի կեանքից ունի իր մէջ և օտար ազգի կեանքի ողին, որ ընդունելով որպէս նախազաղափար հետեւում է նորա ազգեցութեան տակ տրամադրել իւր ազգակին կեանքից բշխած փիլիսոփակութիւնը ինչպէս Հեղելը անում է միշտ աչքի առջեւ ունենալով լունական իդէալը, ալն ժամանակ նորա փիլիսոփալական համակարգութիւնը իր ամբողջութեան մէջ երևեցունում է օտար տարրի խառնուրդ, և որչափ իրական լինի նորա համակարգութիւնը, այնուամենաւնիւ մի մասնով պատկանում է վերացականութեան, որովհետեւ մի ոտքը դրած է գաղափարի վրալ, որ չէ ապրում ալլ ես որպէս կենդանի ալլ տեսնվում է և բռնվում է մաքով:

Որչափ սարսափելի սխալ է, երբ մարդիկ, ընդհանրապէս վազում են ալս սիստէմից դէպի ալն սիստէմը, փիլիսոփայ դառնալու համար իր ազգի մէջ որչափ կրիւխուզութիւն Մինը Քանթին է հետեւում միաը Ֆիլիստին, միւսը Հեղելին և ալլն և ալլն. Խեղճ ալդ բոլորը գերմանական փիլիսոփակութիւնք են, և քու ազգի կեանքից բղխած լինելով քու ազգի մէջ անգործադրելի, եթէ գործադրութիւնը հասկանում ենք դրականապէս, և իրաւունք ունինք ալսպէս հասկանալու, որովհետեւ ալդ համակարգութեանց պաշտողքը, ընդունում են նորանց

որպէս զրական կէտ. Բացի սորանից, Քանթի ֆիլիսո-  
փալութիւնը բղխած էր Քանթի ժամանակակից և կեանքից,  
ալսպէս և ուրիշներինը իրենց ժամանակակից կեանքից.  
Եւ նոյն ազգի ֆիլիսոփալութիւնը, նոյն իսկ իր համար  
չէ կարող ամեն ժամանակ ուղիղ լինել, որովհետեւ ժամա-  
նակն առաջ է վաղում, հասկացողութեանց գումարը կերպարա-  
նափոխ է լինում. Ե՞լ դու, որ և ոչ բնաւ գերմանացի ես, դու  
որ ապրում ես հարիւր տարի Քանթից լետու, —քեզ ինչ կա-  
րող են օգնել Քանթը կամ Հեգելը, եթէ քո խոզարկութեանց  
խորհուրդը քո ազգի վրաւ գործ դնել է նոյցա համակարգու-  
թիւնքը.

Մնաց որ չէ կարելի ճշմարտութիւնը քննել և ճանաչել  
ինքնակալապէս, քանի որ մարդու խուզարկու ունակութիւնքը  
հպատակված են այս կամ այն հեղինակութեան. Վրաւունք  
ունէր Դէկարտը մինչ գրում էր, թէ ևս սկսելով քննել առ-  
աջին գործս այն արի, որ թափեցի վրալիցս ինչ որ մինչեւ  
այժմ գիտէի: Այս շատ խոր ճշմարտութիւն է և գրեթէ լաւի-  
տենական. Որովհետեւ եթէ թափածը դրական ճշմարտութիւն  
է, նա ինքնակալ քննութեամբ դարձեալ կը գու զէպի նա և  
անհնարին է որ չգալ. իսկ թէ համեմատական էր, այն ժա-  
մանակ լաւանի է թէ թափելով նորան տելի շահվեցաւ քան  
թէ համեմատականը ընդունելով որպէս զրական:

Ինչ որ ինձ է վերաբերվում, ես ոչ մի համակարգու-  
թիւն չեմ ընդունում և ամեն համակարգութեանց ստրկարար  
հետեղոքը ծաղրից աւելի ուրիշ բան թող չսպասեն ինձանից:  
Փիլիսոփալութիւնը պիտի բղխի խրսքանչիւր ազգի կեան-  
քից. և այդ կեանքը իւր ամեն մի քալլափոխում ամեն մի  
կերպարանքում (ρήσεις) պիտի աղբերացնէ նոր հակեացք:  
Առաջուց գրված համակարգութիւնքը կանգնում են, նա մե-  
ռած է այն բոպէից, երբ նորա վերջին միտքը ընկել էր թղթի  
վրաւ. կեանքը գնում է առաջ, գնում է և նորա ֆիլիսոփալու-  
թիւնը. Բայց ֆիլիսոփալութիւնը միայն այդ անունով գրքերի  
մէջ տեսնող մարդոց համար, որեիցէ մի հասարակ ազգի մէջ  
ինչ բան ունի ֆիլիսոփալութիւն: Կնկր դքեզ. նոր ֆիլիսո-  
փալութիւնն էլ նորա կեանքիցն է բղխում, ինչպէս կեանքն  
է, այնպէս է և նորա ֆիլիսոփալութիւնը. և քո սքանչելի  
ֆիլիսոփալութիւնքը եթէ կամենաս նորա վրաւ պատուաստել  
կը զառնալ նոյն բանը, եթէ մտածես մի տունի վրաւ այլ

տան հիմք դնել, ուզում ես փիլսոփակ դառնայ քո աղջիկ համար (որովհետեւ կաթողիկէ փիլսոփակ չկալ և չէ կարող լինել, քանի որ ազգութիւնքը կան, քանի որ բնութիւնը ալլ և ալլ աշխարհներում ունի ալլ և ալլ կերպարանքներ և աղղեցութիւնք) ապա ուրեմն ուսիր քո աղջիկ կեանքը, նորա հասկացողութեանց աղբիւրքը, նորա պէտքերը։ Աւ կ կեանքի բարուքելը է ամենամեծ և ճշգրիտ փիլսոփալութիւն։

Ստուգ է, կան ճշմարտութիւնք, որ համեմատաբար դրականք են, քննիր նոցա որակութիւնքը և եթէ օդոտակար և չարմար են քո աղջիկ կեանքին և պէտքերին, ապա ուրեմն աշխատիր, որ ադ ճշմարտութիւնքը մանեն նորա հասկացողութեան գումարի մէջ։ Աշխատիր իրականապէս բարուքել քո աղջիկ կեանքը և թող քո բոլոր իմաստութիւնը ուղղվէ դէպի նորա կեանքը։ Սոփիստութիւնը, մէջէմէջ վերացական միզապատ և քաշկատուք վարդապետութիւնք ընդունելը եթէ քեզ համար փիլսոփալութիւն է, բարով երթաս։ Մարդը իր կեանքը չէ տանում առաջուց նշանակված մի ճամբով։ Կեանքը հոսանուտ բան է և հազար տեսակ լարակցութեանց, դիմադրութեանց, աւելցուր սրա վերալ անհատական ձգողութիւնքը, (քայլանի է թէ միջին թիւը) հանդիպելով կէս մի կորցնում է իր նախաշաւիլը, կէս մի ալլ ընթացք է բռնում կէս մի կանդ է առնում, կէս մի վաղում է անհնարին արագութեամբ։ Եղան ժամանակներ, որ մարդը հարիւր տարի ապրեցաւ, բայց մի օրվաւ ճամփակ չդնաց, բայց եղան ժամանուկներ երբ մի օրում մէկ դար քալեց։ Պարսն, դու գիրքդ ամուր բռնէ ձեռքդ տեսնեմ քու փիլսոփալական կատեգորիներից ինչ կառնուա։ Փիլսոփալութիւնը նաև աղատութիւն քարողած ժամանակ, եթէ զրականապէս դնում է իր վարդապետութեան օճը և համակարգութիւնը որպէս անմերժելի և անբողոքելի, արդէն թշնամի է աղատութեան, արդէն խորտակում է իր փիլսոփալութիւնը։ Մարդկութեան կեանքի աւանչափելի հնդեղի մէջ զաւ ոլի տունն ես կորցնում քո ծանր ու բարակ սահմաններով սեռերով և չդիտեմ զեռ ինչ զանը ու մարով։

Մարդը տուն չունի, մարդը հաց չունի, մարդը հանդերձ չունի, բնութիւնը իր առնելիքները կը պահանջէ, խոհեմ և բնական ճամփան, մարդասէր հնարներ, թէ կարող ես գտնել, որ մարդը տուն գտնէ, հաց ունենալ, մերկութիւնը

ծածկէ բնութեան պարտքերը հատացանէ, ահա արդ ճամփան և հնարներն են փիլիսոփալութեան՝ իսկութիւնը. այն միւս մնացած փիլիսոփալութիւնը որ բնութեան հետ գործ չտնին և բնութեան մէջ զործադրելի չեն այս կամ այն կերպարան-քով ծալիր ծոցդ դիր, կամ գնա համալսարանների պատշգամբ-ներում քարողէ, զուցէ ախտեղ քո արհեստակիցքը հիանան քու խօր զիտութեան վրայ. բնական աշխարհի մէջ, բնու-թեան որդուց մէջ զու տեղ չունիս, կարցաւք կասեցնել.

P. S. որպէս թէ մարդ կաւ է իսկ փիլիսոփալութիւնը բրուտ. ինչ ձև կամենալ կտակ ալդ կաւին. ցնծա.

Փիլիսոփալութիւնը ըստ ինքեան գրեթէ երեք ճիւղ է քածանվում, տրամաբանութիւն, բնական փիլիսոփալութիւն բարուկանութիւն. Գերբնական մասը մարդուն մէջ է դար-ձևալ ուստի եթէ բնական փիլիսոփալութիւնից դուրս դալ կորցնում է իր ամրութիւնը և զառնում է սղնիւ և բարակ դէվդէկութիւն։

Այս բոլորը եթէ իօրն մի առանձին գիտութիւն, համա-կարգութիւն, աւանդվում են մի մարդու գրքի մէջ, և ուրիշ-ները պատրաստ գտնում են նորան և առանց վերստին իրենց անձը աշխատութեան տալու ընդունում են նորան որպէս ծալր գիտութեան, դասնում են այն հեղինակի արծաթադին ստրուկը թէս առանց գիտնալու և զդալու. Կորցված ազա-տութիւնը երեսում է նորանց որպէս զանված աղատութիւն. հեղինակութեան հպատակութիւնը մինչև այն աստիճան շփո-թում է հասկացողութիւնքը. Այս եթէ փիլիսոփալութիւնը, ալ-սինքն որկիցէ պատրաստ վարդապետութեան համակարգութիւ-նը մերժենք, մարդը որտեղից ուսանի ուղիղ խորհիւ, ուղիղ հասկանալ և ամեն բան նորա բնական գունով տեսնել և գնահատել։

Ալդ փիլիսոփալ պարոնը ինչ տեղից առաւ իւր դրու-թիւնքը. լաւանի է թէ կալ աղբիւր, կան քննութեան նիւ-թեր, որ պատուանդան եղան նորա համակարգութեան. իսկ թէ նորա փիլիսոփալութիւնը չունի ալդակիսի պատուանդան ուրեմն, որպէս բռնաբարված խելքի արդիւնք առաւել ևս պի-տի մերժվին և արժանի չեն ընդունելութեան. Բայց ստորդ է որ ընդհանուր պատութիւնը, բնագիտութիւնը են փիլիսո-

փակութեան ճշգրիտ աղբիւրը և հաստատ պատուանդանը: Ուստի պատմութիւնը, ուսիր ընտթիւնը, ուսիր մարդը, իմաստաւիրէ ընկերութիւնը, օրէնքները գ մարդկութեան կեանքի երեսլթքը, դամբր պէտքերը, ճանչցիր պէտքերը լցնելու հնարները և կը դառնաս փիլիսոփալ, աւանց սորա կամ նորա պատրաստած համակարգութիւնքը ընդունելու: Գիտութիւնքը առաջ են գնում և նոցա ընթացքը զարմանալի կերպով լծորդված է իրար հետ: Տեսաբանութեան մէջ մի ապակի է մտնում: Գիմիալի մէջ մի տարր է աւելանում և ահա բովանդակ գիտութիւնքը միահազո՞ն վազում են առաջ: Այս վիճակում լինելով բանի զօրութիւնը լալոնի է թէ Արիստոտէլի փիլիսոփալութիւնը շիկանում է մինչ նա ուղեղը նմանեցնում է սպոնդի: Ոչ միան մեղադրելի չէ նա ալդ մասին, ոչ միան պախարակելի չէ, ալլ դարձեալ զարմանալու արժանի մարդ է, որովհետեւ նորանից առաջ ուղիղի համար քար էլ է ասող չէ եղած պատրաստ գիտութիւնքը ժառանգել և նոցա լուսով անցածը, որ գործված է խաւարում զատապարտել ոչ միան իրաւունք չէ ալլ և անքարուականութիւն: Մեր խօսքը ան է թէ գիտութիւնքը, մարդու կեանքը, ժամանակը, ալինքն հասկացողութեանց գումարը շարժուն և հոսանուտ բան լինելով, շէ կարելի փիլիսոփալու թիւնը աւանդել մի անշարժ տումարի մէջ:

Վարդա արդ փիլիսոփալութիւնքը, որպէս զի սորվիս փիլիսոփալութեան պատմութիւնը և կարողանաս զուգանեռագիծ քաշել անցածի և ներկալի մէջ տեսնել և քննել թէ ինչպէս մարդկալին գիտութեան շրջանը աւելի տարածութիւն է ստանում աստիճան առ աստիճան:

Մասնաւոր զրութիւնք, որ շատ մօտ են դրական ճշմարտութեան զաղափարին արժեն, որ մարդը սորվի և տեսնէ, նոքա սրում են և զուարթացնում են նորա համացող ունակութիւնը. և կան այնպիսի առածներ, որ ուղղակի բնութեան արտափալլութիւն լինելով բիւրապատիկ աւելի ամրութիւն և հաստատութիւն ունին քան թէ ամբողջ շինծու համակարգութիւնք, որ օդի մէջ են ման գալիս, կամ աւելի վատ ոչնչութեան մէջ, որովհետեւ օդը չօշափելի է զգալարանների համար:

Բայց պատրաստ վարդապետութիւնք սորվել և ալսուհետեւ քիթը մընչե ի կոկիսոն Հարոց բարձրացնել թէ ես Քանթի Ֆիլսթէի, Դեկարտի, Էէկոնի Հեքելի և ալլն փիլիսոփալութիւնքն եմ սորվել, և պահանջել որ հանդիպողը ծունր դնէ

իր առջե, պարզ ցուց է տալիս, որ այդ փիլիսոփակ պարոնը ինքը ծնրադրութիւնից աչք չէ բանում այս կամ այն վարդապետութեան առջե.

Վնձնաճանաչութիւն, գիտակցութիւն, հաշուասառ քննութիւն մարդկալին թէ անցած և թէ ներկալ կեանքին, ալ և ընութեան երսոլթեան և նոյն խակ բնութեան, ահա փիլիսոփալութեան ողբւրը, որ բաց է ամեն մարդու առջե, միայն թէ մարդը չծուլանալ օգոտ քաղել։ Եւ եթէ մարդը ընդունակ չէ այդ բուլորի թելերը իր մտքի մէջ որպէս մի կենդրոնի մէջ ամփոփել, նորան միօրինակ անօգուտ են և պատրաստ համակարգութիւնքը։

Մարդու էական արժանաւորութիւնը է նորա մտքի անսահման ազատութիւնը եթէ այն էլ բռնաբարվեցաւ աւս կամ ալն հեղինակութիւնից կամ համակարգութիւնից, էլ Բնչ համ կմնալ մարդկալին արժանաւորութեան մէջ։ Հազար փիլիսոփալութիւն—մէկ ստակի կարող են ասել, թէ փիլիսոփաների ճիգը և նպատակն էլ այն է ինչ որ դու ասում ես ուրիշ խօսքերով թէ ինչ երկար բարակ զլեացաւութիւն։

Բանն էլ այն է որ ուրիշ խօսքերով և եթէ մարդկալին խօսքը կշիռ ու խորհուրդ ունի, ասա ուրեմն ամեն խօսք իրարից տարեբեր էր և չէ շփոթում։ Փիլիսոփակ պարոնները իրենց համակարգութիւնքը հէնց դրել են մէջ տեղ որպէս մի հավատալիք, որպէս դօգմա։ մենք ոչ թէ ձեռնոց ենք նետում իմաստութեան, ալլ ալլ ձերին և դատապարտում ենք նոյն վարդապետութիւնը որ եւ եռում է որպէս դոգմա։ Զէ պէտք մոռնալ, որ մինչեւ ալժմ մարդու արած լառաջադիմութիւնը, թէ և ըստ երեսութիւն կարծիք նորմուծութիւնք, այնու ամենալինի ըստ ինքեան և էականապէս ուրիշ բան չեն եթէ ոչ հին շինուած քների կործանում։ Այնքան շատ և այնքան խիտ են արդ անտէր շինուածքը որ մարդը ճամփակ չունի, և քանի խելքի է ընկնում կամաց կամաց կործանելով նորանց բացում է իր ճամփան։ Աթէ որմիցէ ստրուկ աղատավում է ստրկութիւնից, այդ չէ նշանակում թէ նա նոր բան ստացաւ, ալլ թէ ինչ որ կորցրել էր դտաւ, նորը տակաւին առջեռումն է, Ի ալց ինչպէս է և ինչ պիտի լինի ալդ նորը։ Նթէ մենք քեզ հետ ապրենք մինչև այն ժամանակ, եթէ ուսանենք այն ժամանակի պէտքերը և շրջապատող աշխարհի համակացողութեանց դումարը, այն ժամանակ միայն կարող եմ քեզ ասել թէ ինչպէս բան է ալդ նորը՝ բաւց մինչև այն ժամանակ ինձնից պատասիանի մի սպասէք, ես ո փիլիսոփակ չեմ։

ՄԻԿԱՅՈՒԹ ՆԱԽԱՐԱՐԱՆԱՑ

(Կը շարունակուի)